

† 0. ԿԱՐԲՈՒԷՐ

Յունակարի 14-ին Պարիզում վախճանուեց յայտնի հայագէտ Օ. Կարրիէր, որ Արևելեան կենդանի լեզուների լարժարանում (Ecole des langues orientales vivantes) քսան տարի շարունակ բնուում էր հայոց լեզուի ամբիոնը:

Օ. Կարրիէրը ծնուել է հիւսիսային Ֆրանսիայի Նորմանդի կոչուած գաւառում 1838 թուին։ Սկզբում նա պարապելիս է եղել սևմիտական լեզուներով, ապա ծերացած Դիւլօրիէր մօտ մկնել է ուսանել հայերէն լեզուն, դասել է նրա օգնականը, իսկ իր ուսուցչի մահից յետոց, 1881 թուականին, բռնել է նրա տեղը։

Իր մի շարք քննական հետազոտութիւններով Կարրիէրը աշխատել է որոշել Մ. Խորենացու «Պատմութեան» աղբիւրները, նրա արժանահաւատութիւնը, հեղինակութեան ժամանակը հային Քննադատական ողուց զուրկ և անինքնուրոյն մեր հայկարանների շրջանում նրա կարծիքները հնցող սպաւորութիւն էին թողնում։ Նրա շօշափած հարցերի շուրջո տաք բանակուի էր ծագում և այսպէս թէ այնպէս առաջ էր մղուում քննադատական հետազոտութիւնը մեր հին պատմական աղբիւրների նկատմամբ։ Ֆրանսիայցուն յատուկ փայլուն, սրամիտ, աշխոյժ խառնուածքը տալիս էր նրա դիտական մերկացումներին առանձին հրապոյը ու կմնդանութիւն։

Կարրիէրի կամեզրուն բռնեց երիտասարդ հայագէտ Մէլէն։
